ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆԶՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032,
tandzut.armavir@mta.gov.am, tandzutigyuxapetaran@mail.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 4

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով փողոցային լուսավորության վթարված լամպերը փոխարինել նորով և անջատիչի ձեռքբերման համար

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ /Մ.Միքայելյան/ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 2 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին :

3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամներ Սարգիս Գուլինյանին, Արմեն Խաչատրյանին /համաձայնությամբ /:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020թ.
գ.Տանձուտ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՋՈՒՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

ՄԱՐՏԻ 6-Ի N 4 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԹԱՐՎԱԾ ԼԱՄՊԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԵՎ ԱՆՋԱՏԻՉԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ -ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԲԱՆՎՈՐ

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ.Խուրշուդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032,
tandzut.armavir@mta.gov.am, tandzutigyuxapetaran@mail.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

05 ՄԱՐՏԻ 2020թվականի N 3

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2 մասի առաջին կետի մարտի 8-ի՝ կանանց տոնի միջոցառման կազմակերպման և նվերներ գնելու համար՝

կարգադրում եմ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ /Մ. Միքայելյան/ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 2 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին :

3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամներ Տիգրան Սարգսյանին, Աղունիկ Ղազարյանին /համաձայնությամբ/:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020թ.
գ.Տանձուտ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 5-Ի N 3 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ -ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ

Փ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ.Խուրշուդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2020թվականի N 36

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԵՆՔ_ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մկրտիչ Նիկողոսյանը՝ծնված 1980 թվականին ,դիմել է Տանձուտ համայնքի 14 փողոց թիվ 4 հասցեում գտնվող ժառանգության իրավունքով ձեռք բերված 0.0732հա օրինական տարամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տուն և շենք -շինությունների վերականգնելու խնդրանքով , որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով որ,կառույցը իրականացվել է 1993 թ, և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1.2.3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված **չէ** նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ **թիվ** 912-Ն որոշման կարգով և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով,«Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չգրանցված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ և հիմք ընդունելով Մկրտիչ Նիկողոսյանի մարտի 23-ի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի 14 փողոց թիվ 4 հասցեում գտնվող գույքային մի ավորի՝ Մկրտիչ Նիկողոսյանի՝ ծնված 1990 թվականին ժառանգության իրավունքով ձեռք բերված գույքային իրավունքները ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.0732 հա օրինական տարամերձի վրա գտնվող բնակելի տան և շենք շինությունների նկատմամբ կառուցված 1993թվականին՝ բնակելի տուն 66,1քմ կառուցված 1993թ,բնակելի բաց պատշգամբ 20.1 քմ կառուցված 1993թ , սանհանգույց 16.59ք.մ կառուցված 1993թ, պարիսպ 0.8 քմ կառուցված 1993թ, պարիսպ 6.4ք.մ.կառուցված 2019թ.:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել Մկրտիչ Նիկողոսյան՝ ծնված 1980 թվականին, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք շինությունների նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2020 թ.

–

գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՐՏԻ 2020թվականի N 35

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓԽԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով և Արման Հովհաննիսյանի դիմումը

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Տանձուտ համայնքում գտնվող Արման Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-092-0032-0070 կադաստրային ծածկագրով 0.612 հա գյուղատնտեսական նշանակությամբ հողամասից 2008 քմ նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

2.Հողի սեփականատիրոջը սահմանված կարգով տալ համապատասխան շինարարական թույլտվություն:

3. Համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողերի հաշվեկշիռներում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2020 թ.

—

գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2020թվականի N 34

ՀԱՅԿԱԶ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և 35-րդ կետի 24-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի N 4 որոշումը, Նորիկ Հայկազ Հարությունյանի ծննդյան վկայականը և Հայկազ Հարությունյանի 2020 թվականի մարտի 13-ի դիմումը

Որոշում եմ

1. Տանձուտ համայնքի բնակիչ Հայկազ Հարությունյանի առաջին երեխայի ծննդի հետ կապված կիրառել խրախուսանք՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆԶՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՐՏԻ 2020թվականի N 33

ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ ,24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2 որոշումը և Մանուկ Թադևոսյանի 2020թ. մարտի 11-ի դիմումը

Որոշում եմ

1. Արմավիրի մարզի Տանձուտ համայնքում գտնվող ծածկագիր 04-092-032 սեփականության իրավունքով Մանուկ Թադևոսյանին պատկանող 12256 քմ հողամասի վրա գտնվող անասնաշենքին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք 18 փողոց 7 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՄԱՐՏԻ 2020թվականի N 32

ԳԱԳԻԿ ԲԱՐԴԵՂԱՄՈՍՅԱՆԻ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և 35-րդ կետի 24-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի N 4 որոշումը, Լիզա Գագիկի Բարդեղամոսյանի ծննդյան վկայականը և Գագիկ Բարդեղամոսյանի 2020 թվականի մարտի 5-ի դիմումը

Որոշում եմ

1. Տանձուտ համայնքի բնակիչ Գագիկ Բարդեղամոսյանի երկրորդ երեխայի ծննդի հետ կապված կիրառել խրախուսանք՝ 30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. Մարտի 9
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 31

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 22.02.2019 թվականի N 7 որոշումը և սոցիալական օգնություն տրամադրող հանձնաժողովի թիվ 2 եզրակացությունը

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի բյուջեի սոց. օգնությունից դրամական օգնություն հատկացնել համայնքի մեկ ընտանիքի՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2020թ. Մարտի 6
գ.Տանձուտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի
ղեկավարի 2020 թվականի մարտի 6-ի
թիվ 31 որոշման

Համայնքի ընտանիքներին հատկացված

դրամական օգնություն

ՑՈՒՑԱԿ

N	Անուն, Ազգանուն	անձնագիր	Գումարի չափը /ՀՀ դրամ/
1.	Սիմա Ալեքսանյան	009212119	40 000
	Ընդամենը		40 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՐՏԻ 2020թվականի N 30

ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Տանձուտ համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Տանձուտ համայնքի.

1) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՐՏԻ 2020թվականի N 29

ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Տանձուտ համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ.
գ.Տանձուտ